

1975—1976 ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1976 թ. հունիսի 13-ին տեղի է ունեցել Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի Թարգմանչաց երկրորդական վարժարանի ամավերջի հանդեսը՝ նախագահությամբ ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի:

Սույն հանդեսի գեղարվեստական մասը նվիրված է եղել մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին: Բարձր դասարանի աշակերտները գրավոր ելույթներով ներկայացրել են Ավետիք Իսահակյանի կյանքն ու գործը:

Հանդեսի Բ մասում կատարվել է վկայականների և մրցանակների բաշխումը: Դպրոցի տեսուչ տ. Կյուրեղ ծ. վրդ. Գաբիկյանը տ. Եղիշե պատրիարքին ուղղված գրավոր զեկուցագրով ներկայացրել է դպրոցի տարեկան ընդհանուր հաշվետվությունը:

Զեկուցագրի համաձայն, դպրոցի երկսեռ աշակերտության թիվն անցնող տարեշրջանին եղել է 240՝ բաժանված հետևյալ ձևով.

	մանչ	աղջիկ	գումար
Երկրորդ. բաժին	25	30	55
Նախակրթարան	70	55	125
Մանկապարտեզ	30	30	60
		ընդհանուր՝	240

240 աշակերտներից 36-ն այլ երկրներից են եկել, մեծ մասամբ Թուրքիայից: Սույն 36 աշակերտները կոչվում են Տատուրյան վարժարանի սաներ, որովհետև նրանց ուսումնական, սննդի և այլ ծախսերը հոգում է ամերիկաբնակ բարերար Տատուր Տատուրյանը:

Թարգմանչաց վարժարանի ուսուցչական կազմը բաղկանում է 25 երկսեռ ուսուցիչներից:

Անցնող ուսումնական տարում երկրորդական վարժարանը տվել է 11 երկսեռ շրջանավարտներ:

«Աշակերտության վարքուբարքը և դպրոցական ընդհանուր կարգապահական և բարոյական մակարդակը միշտ եղած է և այս տարի ալ եղավ շատ գոհացուցիչ»:

«Մասնավոր բծախնդրությամբ հոգ տարինք մեր աշակերտներու հոգևոր-կրոնական դաստիարակության, թե՛ քրիստոնեական կրոնի հատուկ դասավանդությամբ և թե՛ ամեն կիրակի ու տոնական առիթներով զանոնք առաջնորդելով սուրբ եկեղեցի: Անոնք ամբողջ կազմով մասնակցեցան մեր հանդիսական մեծ տոնակատարություններուն և իրենց քաղցր ու հոգեպարար երգեցողությամբ ավելցուցին փայլը մեր կրոնական հանդիսություններուն: Նույն ձևով անոնք իրենց լայն մասնակցությունը բե-

ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և. Երուսաղեմ այցելության առիթով կազմակերպված բոլոր հոգևոր ու աշխարհիկ հանդիսություններուն» (Զեկուցագիր):

Այս տարի ևս ուշադրություն է դարձվել նաև դպրոցի աշակերտության ֆիզիկական դաստիարակությանը: Ամսի 9-ին, կիրակի օրը, տեղի է ունեցել վարժարանի տարեկան մարզահանդեսը՝ երկսեռ ուսանողության մասնակցությամբ և ի ներկայության ծնողների և դպրոցի բարեկամների:

Նույն կանոնավորությամբ գործել է դպրոցի մանկապարտեզի բաժինը:

Վարժարանի բյուջեն փակվում է մասնավոր բարերարների նվիրատվություններով: Վարժարանն այս տարի էլ, Նորին Սրբություն Վազգեն Ա Վեհափառի տնօրինությամբ, օգտվել է Աբգարյան կտակից 500 ստերլինգի նվիրատվությամբ, ինչպես նաև Կյուլպենկյան հաստատության և Հայ բարեգործական ընդհանուր միության կրթական ֆոնդերից:

Վարժարանի տարեկան բյուջեի բացն ամեն տարի սիրով փակում են տեր և տիկին Ալեքս Մանուկյանները: Մի շարք բարերարներ հոգում են ծախսերն իրենց անունը կրող դասարանների:

Հեռավոր սուրբ երկրում, սրբոց Հակոբյանց պատմական և դարավոր վանքի հովանու տակ, այս տարի էլ վաստակաշատ տեսչի, ազնիվ և նվիրյալ ուսուցչական կազմի կրթանվեր ջանքերով բոլորվել է ուսումնական արդյունավետ մի տարի՝ օրինության և անմիջական ղեկավարության ներքո ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր, աշխատանք, որն արժանի է և՛ գնահատության, և՛ երախտագիտության: